ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/54

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Ս. Եղիազարյանի (լիազորագիր տրված՝ 18.03.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.03.2020թ. թիվ 26/26-1/4034-2020 գրությամբ «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 09.03.2020թ. թիվ 01/61-4825 գրության հիման վրա, 16.03.2020թ. թիվ 26/26-1/4034-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/54 ընթացակարգի շրջանակներում 20.03.2020թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.03.2020թ. թիվ 01/61-4825 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 18.12.2019 թվականին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/17» ծածկագրով Երևան քաղաքի հուշարձանների պատվանդանների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ընթացակարգ:

Պատվիրատուն հայտնել է, որ սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն և գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո, 27.02.2020 թվականին, Ընկերությանը ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերության կողմից հայտով ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեից ներկայացվել է գրություն առ այն, որ Ընկերությունը ներկայումս դադարեցրել է իր գործունեությունը և չի կարող իրականացնել վերը նշված ծածկագրերով մրցույթի շինարարական աշխատանքների տեխնիկակական հսկողության ծառայությունները: Ուստի չի ներկայացնելու Երևան քաղաքի հուշարձանների պատվանդանների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն առաջարկել է, ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով, Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/54 ընթացակարգի քննության շրջանակներում 20.03.2020թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով նիստի ընթացքում պնդել է գրությամբ հայտնած դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/54 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի հուշարձանների պատվանդանների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/17» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն:

2. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 14.02.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն ճանաչվել է գնման ընթացակարգի ընտրված մասնակից:

3. Նույն արձանագրությամբ կայացվել է Ընկերության հետ՝ որպես ընտրված մասնակից, պայմանագիր կնքելու որոշում:

4. 27.02.2020թ. «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու պայմանագրի նախագծի կնքված երկուական օրինակները, պայմանագրի ապահովումը՝ տուժանքի կամ կանխիկ փողի տեսքով, որակավորման ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տասը տոկոսի չափով: Շինարարական աշխատանքի նախահաշվային արժեքը կազմում է 4.899.957 ՀՀ դրամ: Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով (հավելված 4), որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրով

(համաձայանգրով) ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարմանը հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ: Ընտրված մասնակիցը ներկայացնում է նաև դրա ներկայացման գրությունը, որը պետք է հաշվառվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության փաստաթղթաշրջանառության համակարգում: Նշված ժամկետում վերը նշված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

5. 28.02.2020թ. Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեից (salamyansuren@gmail.com) Մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացվել է գրություն առ այն, որ Ընկերությունը ներկայումս դադարեցրել է իր գործունեությունը և չի կարող իրականացնել «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/17» ծածկագրով մրցույթի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության աշխատանքները՝ Ձեր կողմից սահմանված և բանկային երաշխիքի տրամադրման ժամկետների անհամատեղելիության պատճառով:

6. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.03.2020թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 28.02.2020թ. Ընկերության կողմից ստացված գրությամբ Ընկերությունը, որպես «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/17» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.03.2020թ. թիվ 26/26-1/4034-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 09.03.2020թ. թիվ 01/61-4825 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. ***որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,***

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում սույն պարբերությամբ նախատեսված

ապահովման չափը հավասար է շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տաս տոկոսին:

Նույն կետի 10-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին՝

ա. նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի ապահովումը, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով,

բ. նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա որակավորման ապահովումը հատկացված ֆինանսական միջոցների չափով ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, իսկ հետագայում պահանջվող ֆինանսական միջոցների մասով ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով.

Մրցույթի հրավերի 10-րդ կետի 10.1-րդ, 10.2-րդ և 10.4-րդ ենթակետերի համաձայն՝

10.1 Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում 15 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:

10.2 Մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տասը տոկոսի չափով:

10.4 Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին՝

- նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա որակավորման ապահովումը հատկացված ֆինանսական միջոցների մասով ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի հուշարձանների պատվանդանների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/17» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 14.02.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն ճանաչվել է գնման ընթացակարգի ընտրված մասնակից:

Նույն արձանագրությամբ կայացվել է Ընկերության հետ՝ որպես ընտրված մասնակից, պայմանագիր կնքելու որոշում:

27.02.2020թ. «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու պայմանագրի նախագծի կնքված երկուական օրինակները, պայմանագրի ապահովումը՝ տուժանքի կամ կանխիկ փողի տեսքով, որակավորման ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տասը տոկոսի չափով: Շինարարական աշխատանքի նախահաշվային արժեքը կազմում է 4.899.957 ՀՀ դրամ: Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով (հավելված 4), որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրով (համաձայանգրով) ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարմանը հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ: Ընտրված մասնակիցը ներկայացնում է նաև դրա ներկայացման գրությունը, որը պետք է հաշվառվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության փաստաթղթաշրջանառության համակարգում:

Նշված ժամկետում վերը նշված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

28.02.2020թ. Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեից (salamyansuren@gmail.com) Մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացվել է գրություն առ այն, որ Ընկերությունը ներկայումս դադարեցրել է իր գործունեությունը և չի կարող իրականացնել «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/17» ծածկագրով մրցույթի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության աշխատանքները՝ Ձեր կողմից սահմանված և բանկային երաշխիքի տրամադրման ժամկետների անհամատեղելիության պատճառով:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.03.2020թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 28.02.2020թ. Ընկերության կողմից ստացված գրությամբ Ընկերությունը, որպես «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/17» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ վերոշարադրվածից հետևում է, որ «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն, ***որպես ընտրված մասնակից, հրաժարվել է պայմանագիր կնքելուց***:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.03.2020թ. թիվ 26/26-1/4034-2020 գրությամբ «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**